Սակաւ գտանէր հացն և միայն ի փուռսն վազէին ամբոխն քաղաքիս և լինէր ի վերայ հացին աղմուկ եւ կռիւ՝ ի վերայ միմեանց յարձակեալք եւ հացածախքն ի բռնաւորաց մարդ եղեալ զի նոքա ծախեսցեն անդ նստեալ ի փուռն մինչեւ յերեքշաբաթիս (7 Ապրէլ)(*). և պակսեցաւ չափ հացին մինչև ի տրամս կ կորեկով։ Եւ ոչ թէ միայն հացն այսպէս եղև, այլ և ի միւս կողմի ծովէս ոչ եկն նաւ և ոչ մի, որպէս օրէն էր հանապազ գալ ի Մսրայ և յայլ սահմանացն՝ լցեալ զքաղաքս ամենայն բարութեամբ. այլ ոչ եկն յաշնանէն մինչև ցայժմ, որ բրինձն ԺԸ ըստակ եղև օխան, և յահէ Ֆռանկին ևս միրգ այլ ոչ եկն յԻզմիրու, և ի խիստ ձմեռոյս և ոչխարքն ջարդեալ ոչ ապրեցան ի դուրսն ցրտոյս, քանզի ասացին՝ թէ ի կողմս Հոռոմաց տան ՃԺ օր ոչ է հալեալ ձիւնն. և ի քաղաքս եղեւ մի օխա մսին ԻԶ ըստակ եւ ձկունք եւս ծովէն հատեալ էին և ոչ ելանէր մի ձուկ, այլ միայն ի յաշնանէն մինչև ցայժմ ա՛յն չատ ելանէր յամենայն աւուրս, որոյ անունն բալամիդ ասի, և ի մէջ քաղաքիս կանայն ևս այրեցաւ ի ցրտոյ յամենայն պարտէզս և պոստանս։ Եւ օրն ևս ոչ բանայր զլոյս իւր, այլ հանապազ պաղ եւ մութ, որ եւ ծառ մի եւս ոչ բացին զտերևս կամ զոստս, այլ այժմս սկսաւ փոքր ինչ նշմարել ուռին զոստս իւր, որ Ապրիլիս է էր։

Եւ Դշի (8 Ապրէլ) առաւօտս փոքր ինչ հաց ցրուեցին յամենայն սահմանս հացածախքն և կրկին բարձաւ։ Բայց Եշիս (9 Ապրէլ) սակաւ մի դիմացաւ շնորհօք ողորմութեամբ ներողին Աստուծոյ Ե Զ նաւ գալով ցորենոյ և բռնաւորք զհացն ՃԼ տրամ արարին։

(*) Լուս. Դշիս Աւետիք Աստուածածնի։